

Հայկական կարմիր խաչի ընկերության նախագահ,
ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի
և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները
համակարգող հանձնաժողովի նախագահ

Մ. Մնացականյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և
մալարիայի դեմ ուղղված միջոցառումները
համակարգող հանձնաժողովի

Գլուխ I. Ընդհանուր դրույթներ

- ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովն ստեղծվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական միջգերատեսչական խորհրդի 2002թ. ապրիլի 26-ի նիստի որոշմամբ՝ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարին ուղղված Գլոբալ հիմնադրամի համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրային առաջարկը հաստատելու, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ընթացիկ գերակայող ռազմավարությունների որոշման, Գլոբալ հիմնադրամի ֆինանսական միջոցների բաշխման ու շարունակական հսկողության իրականացման նպատակով: Հանձնաժողովն ընդլայնել է իր գործունեությունը 29 ապրիլի 2005թ. նիստի որոշմամբ՝ ներառելով տուբերկուլոզի և մալարիայի ոլորտները:
- Սույն կանոնակարգը սահմանում է ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի գործունեության կարգը:

Գլուխ II. Հանձնաժողովի հիմնական խնդիրները և գործառույթները

1. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի հիմնական խնդիրներն են.
 - 1.1. պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների, նաև մասնավոր ոլորտի և հասարակության, կողմից ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի հակազդմանն ուղղված միջոցառումների համակարգում,
 - 1.2. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի կանխարգելմանը, ախտորոշմանը, բուժմանը և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին, տուբերկուլոզին և մալարիային վերաբերող գիտական հետազոտությունների առաջնահերթությունների որոշում,
 - 1.3. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ձեռնարկվող միջոցառումների մշակում և բազմաոլորտային հակազդեցության ձևավորում.
 - 1.3.1. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի կանխարգելման միջոցառումներին հասարակական կազմակերպությունների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով, տուբերկուլոզով և մալարիայով ապրող և համաճարակի ազդեցությունը կրող մարդկանց, համայնքների ներկայացուցիչների, միջազգային կազմակերպությունների և մասնավոր ոլորտի առավել ակտիվ մասնակցության ապահովում,
 - 1.3.2. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի համաճարակի հակազդմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ նախարարությունների և կառավարությանն առընթեր գերատեսչությունների, մարզպետարանների ներկայացրած տեղեկատվության քննարկում,
 - 1.4. շարունակական հսկողության և գնահատման իրականացում.
 - 1.4.1 ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի օժանդակած ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի ազգային ծրագրերի շրջանակներում անցկացվող ծրագրային միջոցառումների և ֆինանսավորման իրականացման համակարգում, շարունակական հսկողություն և գնահատում,
 - 1.4.2. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հատուկ նիստում ընդունված մի շարք պարտավորությունների իրականացման առաջընթացի մասին շարունակական հսկողության և հաշվետվության մեխանիզմների մշակում,
 - 1.4.3. Գլոբալ հիմնադրամին ներկայացվելիք ծրագրային առաջարկի արդյունավետության գնահատման նպատակով, ներքին գնահատման կատարում և առաջարկների մշակում՝ առավել արդյունավետության հասնելու համար:
2. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովն, իրեն վերապահված խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները.

- 2.1. հանձնաժողովը գործում է որպես «համաձայնության խումբ», որը համակարգում է իր գործընկերների առաջարկի ներկայացումը: Հանձնաժողովը պարզեցնում է առաջարկի կազմումը, ազգային ռազմավարությունները վերափոխում է հստակ իրականացվող պլանների՝ պարտավորությունների, ժամանակացույցի, բյուջեների և սպասվող արդյունքների ճշգրիտ ներկայացմամբ, հավանություն է տալիս և հաստատում ՀՀ-ում առանձին համակարգված ծրագրային առաջարկների վերջնական տարբերակներին և հսկում է առաջարկված գործողությունների իրականացումը,
- 2.2. հանձնաժողովը գործում է որպես ներկա համագործակցության զարգացման աջակցման և ծրագրերի իրականացման բազմաոլորտային մոտեցման ֆորում: Հանձնաժողովի աշխատանքն ուղղված է ծրագրերի քննարկմանը, տեղեկատվության փոխանակմանը և հարցերի քննարկմանը՝ ըստ Գլոբալ հիմնադրամի գործունեության,
- 2.3. հանձնաժողովը ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի թեմատիկ խմբերի հետ ստեղծում է ֆորում՝ ընթացիկ գործունեության համակարգման և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման առաջնահերթ ուղղություններով անցկացվող միջոցառումների ավելի արդյունավետ իրականացման համար,
- 2.4. հանձնաժողովն ընդհանուր ղեկավար մարմին է և պատասխանատու է Գլոբալ հիմնադրամի միջոցների օգտագործման համար: Հանձնաժողովը պարբերաբար կապ է հաստատում Գլոբալ հիմնադրամի հետ,
- 2.5. հանձնաժողովը պատասխանատու է, շարունակական հսկողության և գնահատման նպատակով, անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման մեխանիզմների առկայության, կամ, եթե այդպիսիք չկան, նմանօրինակ մեխանիզմների ստեղծման համար: Հանձնաժողովն ապահովում է բոլոր անդամների լիարժեք մասնակցությունն իրականացվող աշխատանքներում և հաշվի առնում բոլոր տեսակետները: Հանձնաժողովը պատասխանատու է Գլոբալ հիմնադրամին վերաբերող տեղեկատվության տարածման համար: Հանձնաժողովը կապ է պահպանում հասարակական կազմակերպությունների ու հասարակության այլ ներկայացուցիչների հետ և աջակցում նրանց, ովքեր ցանկանում են ընդգրկվել երկրի համակարգված ծրագրի իրականացման մեջ,
- 2.6. հանձնաժողովին անդամակցում են տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ անենաբարձր մակարդակով՝ կառավարության, հասարակական կազմակերպությունների, մասնավոր ոլորտի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով, տուբերկուլոզով և մալարիայով ապրող մարդկանց, կրոնական և եկեղեցական խմբերի, ակադեմիական և լուսավորչական ոլորտի, ՄԱԿ-ի, միակողմանի և երկկողմանի գործընկերների լայն ընդգրկմամբ,

- 2.7. հանձնաժողովի բոլոր անդամները համարվում են լիիրավ գործընկերներ, անդամակցության իրենց իրավասությանը համապատասխան որոշումների ընդունմանը մասնակցելու և իրենց տեսակետն ազատ արտահայտելու լիիրավ իրավունքով,
- 2.8. հանձնաժողովին անդամակցել կարող են իրավաբանական անձինք, պետական կառավարման մարմինների ներկայացուցիչները, նաև ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով և տուբերկուլոզով ապրող մարդիկ ու մալարիայով հիվանդացած մարդ: Հանձնաժողովին անդամակցելու համար հանձնաժողովի քարտուղարություն են ներկայացվում հանձնաժողովի նախագահի անունով նամակ-դիմում, պետական գրանցման փաստաթղթեր (պետռեգիստրի գրանցման վկայականի պատճեն, կանոնադրության պատճեն, կազմակերպության ծավալած գործունեության նկարագիր և հանձնաժողովի անդամ դառնալու համար նամակ-հիմնավորում) և երեք երաշխավորագիր-նամակ՝ ՄՀՀ-ի անդամների կողմից,
- 2.9. հանձնաժողովի կազմում ընդգրկվելու հարցը որոշվում է հանձնաժողովի հերթական նիստին գաղտնի քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ,
- 2.10. հանձնաժողովի անդամի հանձնաժողովից դուրս գալու ցանկության դեպքում հանձնաժողովի անդամը գրավոր դիմում է հանձնաժողովի քարտուղարություն, և այդ հարցը ներկայացվում է հանձնաժողովի հերթական նիստին,
- 2.11. հանձնաժողովի նիստին նախագահի և նախագահի տեղակալի բացակայության դեպքում հանձնաժողովի անդամներն ընտրում են նիստը նախագահող,
- 2.12. իրենց հնարավորություններին և իրավազորություններին համապատասխան, հանձնաժողովի բոլոր անդամներն ակտիվորեն մասնակցում են հանձնաժողովի աշխատանքներին:

Գլուխ III. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի քարտուղարությունը

1. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ընթացիկ աշխատանքների իրականացման, հանձնաժողովի նիստերի նախապատրաստական աշխատանքների համակարգման, հանձնաժողովի որոշումների իրականացման ընթացիկ հսկողության համար ստեղծվում է ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի քարտուղարություն, որը գլխավորում է քարտուղարը: Իր ընթացիկ գործունեության ընթացքում հանձնաժողովի քարտուղարությունը հաշվետու է հանձնաժողովի նախագահին,

2. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ առաջնահերթ ուղղությունների միջոցառումների իրականացման ընթացքում առաջացող խնդիրների լուծման համար քարտուղարությունը ձևավորում է աշխատանքային խմբեր, առաջին հերթին՝ շարունակական հսկողության և գնահատման խումբ, որոնց կազմը հաստատում է հանձնաժողովը կամ հանձնաժողովի նախագահը՝ նիստերի միջև ընկած ժամանակահատվածում:

Գլուխ IV. Հանձնաժողովի նիստերի անցկացման և որոշումների ընդունման կարգը

1. Հանձնաժողովի նախագահը ղեկավարում է հանձնաժողովի նիստերը, իսկ նրա բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը:
2. Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերը և դրանց որոշումների նախագծերը մշակում է քարտուղարությունը: Հանձնաժողովի նիստերին քննարկման համար անհրաժեշտ նյութերը տրամադրում են հանձնաժողովի անդամները և ծրագիրն իրականացնող կազմակերպությունները:
3. Հանձնաժողովի աշխատանքների հետ առնչվող նյութերի նախապատրաստումն իրականացնում է հանձնաժողովի քարտուղարությունը:
4. Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, նվազագույնը՝ 3 ամիսը մեկ անգամ:
5. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են, և արձանագրությունն ուղարկվում է հանձնաժողովի անդամ նախարարություններին, կառավարությանն առընթեր գերատեսչություններին, կառավարման մարմիններին, մասնավոր ոլորտի ներկայացուցիչներին, միջազգային ու հասարակական կազմակերպություններին:
6. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն կեսը:
7. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: